



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ  
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

21 03 2013թ. 15-Ն  
«-----» ----- Թիվ -----

**ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ. ԲՅՈՒՋԵԻ  
ԵՎԱՄՏԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԵՐՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ  
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության 2013թ. պետական բյուջեի «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում», ծրագրով նախատեսված միջոցների ավելացումը, ինչպես նաև Արտաշատ քաղաքում լուսավորության ցանցի հիմնանորոգման անհրաժեշտությունը, համաձայն բյուջետային համակարգի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի և 28-րդ հոդվածի.

Քաղաքային համայնքի ավագանին **Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

1. Թույլատրել բյուջեի եկամտային մասը պատվիրակված լիազորությունների գծով ավելացնել 129100 /մեկ հարյուր քսանինը հազար հարյուր/ դրամի չափով:
2. Թույլատրել բյուջեի ծախսերի 01.03.01.51 գործառական դասակարգման 4111 հոդվածը ավելացնել 120000 /մեկ հարյուր քսան հազար/ դրամի չափով, 4212 հոդվածը 9100 /ինը հազար հարյուր/ դրամի չափով.
3. Թույլատրել 11.01.02.52 գործառական դասակարգման 4891 հոդվածից 3200000 /երեք միլիոն երկու հարյուր հազար/ դրամ ուղղել՝
  - 3000000 /երեք միլիոն/ դրամ 06.04.01.51 գործառական դասակարգման 5113 հոդվածին արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգման աշխատանքների համար.
  - 200000 /երկու հարյուր հազար/ դրամ 06.04.01.51 գործառական դասակարգման 5134 հոդվածին նախագծային աշխատանքներ կատարելու համար:

Բենիամինյան Կարեն  
Դերմոյան Արման  
Հովհաննիսյան Վազգեն  
Նազարյան Գոռ  
Վարդանյան Ռազմիկ

Գալստյան Արթուր  
Հայրապետյան Ռուզան  
Մելքոնյան Վանիկ  
Վարդազարյան Վահագն

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

*Գ. ՍՈՒՐԱՂՅԱՆ*  
**Գ. ՍՈՒՐԱՂՅԱՆ**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ  
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

21 03 16-Ն  
«-----» ----- 2013թ. Թիվ -----

**ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ  
ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ  
ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, „Տեղական ինքնակառավարման մասին“, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

**Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

1. Թույլատրել աճուրդային կարգով օտարելու Արտաշատի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, Արտաշատ քաղաքի՝
  - Օգոստոսի 23 փողոցի թիվ 109/3 հասցեում գտնվող 375 քմ,
  - Շահումյան փողոցի թիվ 30/2 հասցեում գտնվող 66,5 քմ
 մակերեսներով հողամասերը առևտրի օբյեկտ և օժանդակ շինություն կառուցելու համար:
2. Հողամասերի աճուրդային կարգով օտարման մեկնարկային գները սահմանել նրանց կադաստրային արժեքների 100 %-ի չափով:
3. Աճուրդներն անցկացնել բաց դասական եղանակով:

Բենիամինյան Կարեն  
Դերմոյան Արման  
Հովհաննիսյան Վազգեն  
Նազարյան Գոռ  
Վարդանյան Ռազմիկ

Գալստյան Արթուր  
Հայրապետյան Ռուզան  
Մելքոնյան Վանիկ  
Վարդանյան Վահագան

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

*Գ. Ս. Մ. Ս. Ս.*  
**Գ. ՍՈՒՐԱԴՅԱՆ**

